



# Ա Ր Ա Ր Ա Տ

Թիկ Բ.—ԵՐԶԱՆ ԺԳ.

1880

ՏԱՐԻ ԺԳ. ՕԳՈՍՏՈՒ ՅՈՒՆԻ

Ա.ՍՈՒԻ.Ա.Մ ՍԵՐ Է.

«Աստուած սէր է» ինչպէս յաճախ է լսվում բեմերից քառազիների բերանից եւ քրիստոնեաների ազօթքների մէջ, ինչպէս յաճախ է կրկնվում այս մեծ խօսքն, մարդկային երկչառ սիրտը հանգստացնող այս միակ խօսքն։ Բայց ո՞րչափ քիչ մարդիկ են այդ խօսքն ու նորա միտքը հասկացողները։ Եւ «ըշտիչներն են այս երջանիս-նիւն պարբեռող խօսչին հապարեալ հաստապուն հաստապացողներն։»

Այս խօսքն է ասում ու հաստատում ամբողջ աշխարհս, թէ երկնքում, թէ երկրիս վերայ. բնութեան բոլոր օրէնքները վկայութիւն են տալիս—, մեր բանական միտքը հրամայումէ ընդունել—, Յիսուսի Քրիստոսի մեզ յայտնածները՝ քարոզումեն ու խրառում մեզ —, բայց ինչպէս անհաստատ է շատ ու շատ մարդի հոգու մէջ այս հաւատը, ինչպէս խոր չէ տպաւորված, խոր արմատ չէ բռնած մեր սրտի մէջ։

Աւետարանի քարոզիչները ուրախ ուրախ տարան, տարածեցին այս մեծ խօսքը աշխարհիս աղքերի մէջ, բայց այնպէս է երեւում, որ աշխարհիս շատ ու շատ զարհուրելի իրողութիւններն հակառակ են այս խօսքին։ Մահկանացու մարդկութիւնը, գեռ եւս շատ հին ժամանակներից սկսած, տեսաւ երկիրներ, թագաւորութիւններ, քանդող, տակն ու վերայ անող սարսափելի պատերազմներ, որ շատ ու շատ աղքերի ամեն ուրախութիւնները սրտերի մէջ մեռցին. այս պատերազմներն Աստուածու հրամանով դուրս եկան, բայց իւրեանց զարհուրելի լինելովից

մարգիկների սիրար այնպիսի աշ ու գող ընկաւ, որ սարսափումէին իւրեանց մարից անցկացնելու, որ այս չարիքը ամենին սիրող Աստուծուց լինի, ամենին սիրող Աստուծու կամքովն պատահում լինին այդ ու այդպիսի սարսափելի փորձանբները։ Տեսան ջրի հեղեղների ամբողջ երկիրներ կուլ տալը տեսան երկրի հաստատ հիմունքը գետնաշարժից սասանելը և անթիւ անհամար բազգաւոր ավրող բնտանիբների կեանքը մի բոլէի մէջ ոչնչանալը, տեսան լեռների կտոր կտոր լինելն ու փուլ գալը և բաղմամարդ երկիրների իւրեանց փլատակների տակ յաւիտեան ծածկելն ու թագելը, տեսան նաւերը ծայի մէջ մրբիկից անգանգը գնալը, տեսան ժանտախտից ու նման ցաւերից, կտմ սով ընկնելուց ամբողջ թագաւորութիւնների անապատ գառնալը, եւ կասկածանքով հարցնումէին թէ մի՛ թէ այս զարհուրելի պատահմունքը կարող են լինել Աստուծուց, Արք բոլորովին ուր է։

Այս տեկով, ձայն էր տալիս նոցա սիրար։ Զանք էին անում, իւրեանց գեռ եւս կարձ ու խակ խելքովն որ աշխարհին կառավարութեան մէջ երեւեցած միմեանց հակառակ պատահմունքներին խելք հասցնեն, հասկանան. եւ այն մաքին եկան, որ սկըսեցին հաւատալ որ ոչ թէ ամենին եւ ամենայն իւրաքանչ սիրող մի Աստուծած կոյ միայն, այլ բացի նորանից մի չափ էռնիւն եւս կայ, որ նորա բարսւթեանը բնգգէմ ու հակառակ է եւ նորա հետ միշտ պատերազմի մէջ է։ Այսպէս մարդկային երիխայտկան երեւակայութեան ոյժը սահզծեց երչու Վապանական գրեթէ համազօր, եւ երկուսին եւս, իրեւ միմեանց թշնամի էակիներ ու զօրութիւններ բազմեցրեց բոլոր աշխարհիս թագաւորութեան սախափ վերայ։ Մարդիկ բարչ Վապանական սիրումէին եւ նորան զոհեր էին բերում իւրեանց զրնորհակալութիւնը յայտնելու համար, բայց միեւնոյն ժամանակ սապանացին եւս վախենումէին, որ իւրեանց վայելած բոլոր օրհնութիւններն ու բարօրութիւնը կրկին անգամ՝ անէծքի ու սեւօրերի կարու է դարձնել։

Այսպէս էին իւրեանց բացատրում գեռ եւս շատ հին ժամանակներում քանի քանի ազգեր աշխարհիս մէջ եղած չարի գոյցութիւն ու ծնունդը եւ Աստուծու մեծութեանը վերայ իւրեանց ունեցած խեղճ ու աղքատ գաղափարներով չէին կարողանում բերել, համաձայնիցնել Աստուծու սիրոյ հետ չարի ծագումն։

Աստուծու ամենակարսղութեան եւ ամենիմաստութեան հետ չյարմարելու եւ չհամաձայնիցնելու այս գաղափարը մեր օրերում ուեզ չունի. Աստուծուց գուրս Աստուծած չկայ. Միայն նա է իրաւունք ու իշխանութիւն ունեցողը կենդանիների եւ մեռածների վերայ. Նա միայն է աշխարհների վիճակը կարգադրողը, անօրինողը։

Այսպէս է մտածում քրիստոնեան։ Բայց գժբաղդաբար, շատ քրիստոնեաների գաղափարը ամենին ու ամեն արարած սիրող

Աստուծու վերայ գարձեալ աւելի ազնուայած չէ։ Շատերը կան որ թէեւ մի Առաքուած են հաւատում ու ընդունում, բայց այդ իւրեանց հաւատի հետ գարձեալ շատ ցա եր փորձանքներ, որ պատահումեն մարդիս կամ աշխարհիս մէջ անարժան կերպով են մեկնում իւրեանց մարդկային ազգի Աստուծու ձեռքը դաստիարակվելու օրերը փրկութեան օրերից զգանազաններով։ տուերն ու լոյսն մէկ տեսնելով։ Այս ասածս հաստատումէ աշխարհիս Փրկիչն նաեւ հետեւեալ գիպուածով։ Երբոր նորա աշակերտները մի ժամանակ Եղիայ մարդարէի նման, նոյն պէս երկնքից իջած կրակով վշացնել էին կամենում Ամարացների մի գիւղ, որ իւրեանց հիւր ընդունել չէր կամեցել, Քրիստոս մեր Տէրն ոուրը քաղցրութեամբ լի խօսքերով ասաց նոցաւ։ «Չգէ+է՞+, որ հոգու որդիներ է+ դու++, Տարդի որդին չէ եկել Տարդիներէ իւանուլ վշացնելու։ այլ պահպանելու» (Պուկ. 9, 51—56)։

Թէեւ շատ անգամ այսպիսի պարզ կերպով յայտնեց Փրկիչն ոզորմած երկնաւոր Հօր գիտութիւնն աշխարհիս երեսը ազրող մարդիկների զաւակների վերայ, բայց եւ այնպէս Աւետարանի յետոյ եզած քարոզիցներից եղան այնպիսիները, որ նորա բռնած ճանապարհով զգնացին։ Ճշմարտութիւն համեանալը ճշմարտութեան համար մարդիս հասունանալը ոչ թէ միանգամիցն է լինում, այլ կամաց կամոց միտյն։ Հին կտակարանի կէտից նոյելը գեռ եւս շատ կողմից Փրիստոսի եկեղեցու ուսման մէջ մեծ տեղ ուներ. այնպիսի եկեղեցակամներ կային, որոնց համացազողութեամբ աշխարհս կաւագարազ Աստուածն ոչ թէ ոզորմած Հայր էր, այլ մի գարհուրելի Աստուած։ ոչ թէ բոլոր սրբով ու բոլոր մարզով Նորա վերայ ունեցած մարդիկների ուշին պէտք էր, ազնուացնելով իւրեանց գէպ ի առաքինութիւն տանէր, այլ Նորա բարկութիւնից իւրեանց վերայ ահ ու դոզ բերող սարսափը մեզ անբազգութիւն բերող պատահմանինիքը ամենիմաստ Աստուծու կողմից մեզ ոչ թէ գաստիարակելու մեծամեծ միջոցներն էին այս քարոզիչների համացազութեամբ, այլ ծեծի փայտի հարուածների իրեւ պատժի միջոցներ։ որ առանց մեղքանալու եւ ոզորմելու պէտք էր քաշէր Աստուծուց հեռացած, օտարացած մարդկային ազգի մասն եւ Աստուծուց հեռանալ, Աստուած ուրանալ էր համարվում իսկապէս ոչ միայն սրբի անմոքրութիւնն կամ ապականված սիրոն, այլ սրբնից եւս առաւել մեծ մեզը էր համարվում հեռանալը եկեղեցակամների պատուէրներից եւ եկեղեցու արարողութիւններից։ Փրիստոնէւթիւնը շատ տեղ գեռ եւս հազիւ այնքան միայն է փոխվել, որ քրիստոնէական խոռիրի գարձուածներով քոզարկած մի հրէականութիւն է պահպիւլ, մնացել։

Բայց մենք պահումենք այն, ինչ որ Յիսուս Քրիստոս յայտնեց Նա նկարագրեց մեզ Հօրն ամենամ+ուր ուշը, որի մէջ յար բան լինելը մորից անցկացնել կարելի չէ. նկարագրեց Նորան ամեն-

կապարքեալ եւի, որի մէջ մարդկային ոչ մի թոյլ ու վատ կողմը չկայ, ոչ բարկութիւն, ոչ զրեժինդրութիւն, ոչ առելութիւն, եւ ոչ եւս կարելի է, որ գանցի այդպիսի մի բան նա ինքն է, որ պարաւումէ մարդի մէջ անգամ այսպիսի կիրքերի երեւան գար — , ուր մնաց որ գերազոյն կակի վերաց նորա վերաց որ միայն որբութիւն է ու սուրբ, վայելուչ ու գովական համարէր.

Ե՞նչպէս ուրեմն եթէ որ Աստուած միայն սիրել ունի ու բրնձաւ չէ բարկանցւմ, չարն ի՞նչպէս է ուրեմն աշխարհիս մէջ ձնիկել. Այդ է ուրեմն այս այն մեր անրազաւթեան ու քաշած ցաւերի պատճառն Այսպէս է հարցնում կասկած տանող քրիստոնեան, այս հարցումն է անում նոյնպէս ցաւ քաշագ մարդին, որ իւր ամեն տեսակ անրազդութիւնները ուրիշ կերպ իւրեան մեկնել, հասկացնել չէ կարօզանում, Այժէ որ ամեն բան ստեղծողն Աստուած է, չարն եւս նա չէ ստեղծել արդեօք. Աւ ի՞նչպէս որէաքէ համաձայն եցնեմ ես սց նորա խմաստութեան ու բարութեան հետ մինչեւ անգամ միայն նորա արդարութեանը հետ:

Ե՞նչ պատասխան պէտքէ տամ քեզ, ոյ կասկած անկողի ինքը քեզ ուտոս մարդ, մի բան միայն կարող եմ քեզ ասել. Էռլը աշխարհիս Աք ու Ա Ք Ասոյ Բաց է Արդէց. Աւ մեղքը մարդիս գործն է. պատճառ որ Աստուածու իւրեան տուած ազատ կամքովն կարող է բնարել բարին կամ չարն ուղիղ կամ ծուռ բանն. Եւ որովհետեւ Աստուածու ամեն ստեղծածները բարի են, գորա համար վատը, ծուռը ինքն իւրեան ջոկվումէ, բաժանվում եւ երբ որ մարդս չարն է կամենում, նորա ցան զգումէ. բայց այդ ցաւը նորա բարուն համար, որ ուղղի, լուանայ, որ նա այնու հետեւ Աստուածու կողմից բոլոր աշխարհիս մէջ սահմանած կարգերի ընդգէմ չգործէ. բայց Աստուածու զրած կարգերն միայն անկենդան ընութեան համար սահմանած օրէնքները չեն, այս եւ մեր համար են, մեր կենդանի ընութեան մէջ,

Ա՞ն+ ին+նէր+ ին+ +որէ մէր ամենալավ ցաւ-էրի պատճառն, որովհետեւ մեր կիրքերին հնազանդելով, նոցա ստորագրվելով, Աստուածու դրած ու սահմանած միշտ հաստատունց անփօփօխ ու յաւիտենական օրէնքների եւ կարգի հետ պատերազմաւ մենք ընդգէմ գնալով, ընդգէմը անելով. Այսպէս երեխայն ինքն է իւր քաշած ցաւի պատճառն, որ անփօրձութեամբ ու խելքը չկրտքելով, վասնգաւոր գործիքներով իւրեան վնաս է բերել, կամ վիրաւորել. բայց նորա քաշած այս ցաւն բարերար ուսուցիչ է զառնում իւր համար զգուշութիւն սովորեցնելով իւրեան. Այսպէս երեխայն ինքն է իւր քաշած նեղութեան պատճառն, երբ որ խօսք ցանկով, իւր առածն անելով, կամ թեթեւամսութեամբ այնպիսի բան է կերել, որ իւր առողջութեանն մնաս պէտքէ բերէր. բայց այս նեղութեանն, որ քաշումէ, բարերար մի ուսուցիչ կդանայ իւր համար որ իւելք սովորէ մաքին եկածը չանէ:

Նրկնային կարգագրութիւններն երկրիս համար այն են, որ մենք քանի գնանքը, աւելի իմաստուն լինինք, քանի գնանք, աւելի առաքինի ու Աստուծու հնագանդ եւ համարիմ լինինք նեղութիւնն ու ցաւը մարդ կային ազգին ճանապարհը գեղ ի կատարելութիւն գնալու ցոյց առազններն են. և եթէ որ ոչ մի ժամանակ քարոզող եւս եղած լինիքը մարդիկներին թէ իմաստուն եւ առաքինի պէտքէ լինին, անլեզու բնութիւնն, որ մեզ Աստուած յայտնող է, կարող էր մեզ սովորեցնել:

Իրան է, մեր կեանքի մէջ այնպիսի ցաւեր ու նեղութիւններ եւս կան, որ ամեննեւին մեր արածների հետեւանքն չեն ու չպիտի համարվին. Երբ որ կարկուար ցանք փշացնումէ, պատերագմբն մեր աները գատարի ու անրնակ թողնումը, ժանախար, ժանտամաշը երկիրներ է անապատ գարձնում—ինչ կգայ արկար մահկանացու մարդիս ձիռիցն բնութեան անդիմազրելի ուժի առաջին, Ամենակարոզի զօրութեան առաջին. և դարձեալ ամենամոքուր սէր է Աստուած. Այս, ամենամարուր սէր է նու ընս-թէան (աշխարհիս) Աջ պատահած ու պարզանիւան Աջ գլուխ աշենարձանին, աշենապահնութելի պատահմանէի մէջն եւս:

Պատճառ որ այս ամենայն եղած յեղափոխութիւնները, երբ որ լաւ խելքի տակ ենք ձգում, ինչ է գուրս գալիս վերջը, ինչ է փշացել, ոչինչը, հոգն ու մոխիրը, էսլի—մարդիս անմարմինը. թէն չէ, իւր անմահ հոգին չէ, և ոչ է, որ աշխարհիս ամեն վաս բանին վերջն եւս վաս բան համարէ. խօսրա մարդիս մահի վերայ է. երկրաւոր կեանքի վերջն չէ արդեօք մարդիս մահն, և մեր աւելի բարձր գոյութեան յայտնիլն, մեր աւելի բան կեանքի սկսվիլն. Աւրեմն, եթէ որ հազարաւոր բիւրաւոր մարդիկ, հայրեկն իւրեանց գաւակների հետ պասկած մարդիկը իւրեանց կանանց հետ բնութեան մի սատարիկ մեծ ու զօրաւոր պատահմաններով նախախնամութեան անքննելի խորհրդավորն ու կամեցազութեամբը միւնայն բռնկէի մէջ մեռնեն, իսկը որ նայես, այդ տեսակ մահին ու մի հիւանդութեամբ մարդիս մեռնելու մէջ՝ մի մեծ զանազանութիւն կայ արդեօք: Յանկարծ աշխարհիս երեսից սրբվող, անյայտացող այն շատ մարդիկը մի քանի ապրուց յետոյ իւրեանց յաւիտենական Հօր մօան նոյնպէս գնալու չէին արդեօք: Աւրեմն եթէ որ մահը, մեռնելը մի վաս բան չէ, մի չարիք չէ, բիւրաւոր մարդիկ յանկարծ կուլ տաւով երկրաշարժը, ամենայն բան ծածկոց խեղոտոց, փշացնող ջրի հեղեղը և մարդիս կեանքը ոչնչացնող ամեն մի ուրիշ պատահմաններից լինի բեռն մի վատքան, մի չարիք չէ: Այս պատահմաններից յետոյ կենդանի մնացողների համար միայն զարհուրելի բան է ինչ որ իւրեանց աչքովն տեսնումն, կամ երբ որ միտքներն բերում թէ ինչ եր եղան, ինչ բաներ պատահեցան: Եթէ որ հարցնես թէ ինչի համար է նոցա այդպէս թւում, պատախանն ացն է թէ, մահկանացու մարդս այդպիսի զիսլուածներումն է ցոյց առվիս իւր տկար:

ջաշին մի արարած լինելը եւ ամենաբարձրեալ Աստուծու առաջին դուղալն եթէ մի այսպիսի պատահմանքի պատճառով իրաւունք համարէինք մեզ կասկածել Աստուծու սիրոյ վերայ այս ժամանակ ամեն մի մարդի մաշն եւս նոյն իրաւունքը պէտք էր տար մեզ այդպիսի կասկածանքի Ավ այնքան խելքը մէկ կողմը դրած մարդ կլինէր որ ուրանար Աստուծու սէրը նորա համար, որ մարդիկ խրեանց նշակութեան են մօտենում:

Եւանց իշխանց Աղասուս լինելու պեսակ ուսումնէր +աղաղների յառաջապահում առելի սարսափելի է, +ան նև իշխանց պանջանաների վերջը, ո՞՛ մահն է: Բայց այս մարմնաւոր ցաւը, որ իւր հիմն ունի բնութեան կարգադրութիւնների մէջն, առիթ չէ կրօրող տալ մեզ մեր մըտքից հնարելու այնպիսի մի բան, որ Աստուծու համար իբր թէ մի զուարձութիւն է անդժութիւնը, մարդիկների տանջելը: Ամենայն չարչարանքներ, որ քաշումենք մենք, մի մեզ պատահած անբաղդութիւնից, կամ մի հիւանդութիւնից, Աստուծունորա համար են մեր գլխին գտիս, որ մեզ խրատեն եւ ցոյց տան, որ Աստուած մեզ երեսիցն չէ ձգել. այլ մեզ սիրումէ ու մեր ուղղվելն ու լաւանալն է կամենում: Թէեւ մենք մեր քաշածների բարերար ներգործութիւնը ամեն անդամ իսկրյն չենք հասկանում, մանաւանդ բան չենք հասկանում այն միջոցին, երբ որ այդ փորձանքը գեռեւս նոր է մեզ պատահած լինում: Բայց ոյս ժամանակ աւելի լաւ հասկացած կլինինք, երբ որ մեր գլխին եկածից ինքներս մեզ աւելի իմաստուն եւ աւելի բարեպաշտ մարդ գարձած տեսնենք: Պէտքէ այսպիսի ցաւերի օրեր ու շաբաթներ երբեմն պատահին մահկանացու մարդիս կեանքի մէջ, որ մինչեւ ցայժմ՝ իւր բունած ճանապարհ ուժով կարեն, նորա ձգտմունքի, մոքերի, ջանքերի առաջն յանեկարծ բռնեն, նորան կանգնեցնեն, կամ նորա ձեռները թուլացնեն, կամ նորան խոր թմրութիւնից զարթեցնեն, կամ նորա փոշին վերային մի թափ տան. կամ թէ նորա միտքը ձգեն: Ինչ որ համարանալուն մոռացել էր, որ Աստուած կայ, յաւիտենական կեանք կայ:

Այս աշխարհիս կեանքի հանգամանքների մէջ մեր ցաւ եր ու նեղութիւններ քաշելով, փորձածն ու իմացածը միշտ իմաստութեան բարերար ուսուցիչներ են մեզ համար: Նոքա միտներս են ձգում մեր պարտականութիւնը թէ ինչ աչքով պէտք է նայենք այս աշխարհիս վերայ, թէ ինչպէս փոփոխական, անհաստատ, անցաւոր, ոչինչ է ամեն բան, ինչ հոգիցն ու հող պիտի դառնայ Աեր քաշածները մեր աչքի առաջն են գնում մեր պարտականութիւնը, որ շատ մեծ բան չհամարենք աշխարհիս մէջի բաներն, այլ մեր հոգին բարձրացնենք գէպի անփոփոխն, յաւիտենականն ու Աստուած այինն: Այս որ իւր քաշածների մէջ ոյս է սովորում, այն մարդին երբէք չեն կոտրի բոլորովին ոչ աղքատութիւնը, ոչ հիւանդութիւնը, ոչ աչքից ընկնելը, կամ մարդի կարգում չհամարվիլը, ոչ սիրելանների մահն եւ ոչ

ուրիշ անբաղդութիւնները: Կա այս աշխարհիս ժամանակաւոր բաղդաւորութեան խաղից բարձր է, եւ գիտէ, որ Աստուծու արածը բարի է:

Անտարակոյս, բարձրեալ Աստուծու սիրոյ Եռթիւնից գուրս բան չենք կարող համարել եւ մի պատճող արդարութիւն եւս, Քրիստոս մեր Տէրն, որչափ որ պարզ ու պայծառ կերպով յայտնեց մեր երկնաւոր Հօր յաւխտենական ողորմութիւն, նոյն չափ որոշ կերպով խօսեցաւ նաեւ բարու եւ չարի հատուցումն լինելու մասին: Բայց նա չխօսեցաւ հին հրեաների մտքովն ու նոյցա ունեցած գաղափարամն մէ՛: Աստուծու բարկացող է, հայրերի վատ գործերի պատիժն նոցա որդիների քաշել տուող մինչեւ երրորդ կամ չորրորդ պորտ: այլ նորա ասածներն միշտ այն միտքն ունեին թէ՛: Աստուծու համատարած սէրն, մի գատարակող գործունէութիւն է: Զուր տեղը չէ բանեցնում նա Հօր ու զաւակների սուրբ օրինակն, երբ որ Աստուծու ու մարդիկների հետ ունեցած յարաբերութեան վերայ է խօսում: Թէ եւ մի ազնիւ ընտանեկան կեանքի մէջ ծնողներն իւրեանց զաւակներին սրտանց սիրումն են նոյցա համար ամենայն բան, մինչեւ անդամ իւրեանց կեանքի բաղդաւորութիւն, նոցա սիրոյն զոհել յանձն կառնեն, բայց նոցա այնպիսի երես միշտ չեն ցոյց տալիս, թէ նոցա ամեն արածին հաւան են: Երբ որ գտաւակները մի սիսալանք են ունենում, պէտքէ նոցա մեղադրեն, նախատեն ու պատճեն, եւ երբ որ նոցա սրտի մէջ արմատ քռնած յանցանքը պէտքէ նոցա մէջից հանեն, այն ժամանակ պէտքէ զօրաւոր եւ զգալի մի պատիժ տան նոցա: Բայց այն ժամանակ եւս պատիժ, բարկութիւն թափելու, կամ ատելութիւն ցոյց տալու համար չէ նոցա այդպիսի վարմունքն, այլ անուրանալի կերպով երեւումէ այս սէրն, որի նպատակը յանցանք ունեցողին ուղղել լաւացնելն է: Այս երկրաւոր սիրոյ օրինակն ու նմանութիւն է տեսնում Քրիստոս մեր Տէրն մեր երկնաւոր Հօր կառավարութեան մէջ: Այս, կան եւ պատիժներ, որ Աստուծու արդարութիւնից պէտքէ ստանանք ու քաշենք, եւ պէտքէ քաշենք, որովհետեւ մենք ինքներս ենք Աստուծու արդարութեան այդ պատիժներն մեր գլխին բերել մեր յանցանքով: Երբ որ մի թեթեւակիտ տանտեր իւր ունեցածն, իւր չափից գուրս լաւ ասպելով, շռայլութեամբ ձեռիցն հանել, փչացրել է, մի բնական, Աստուծուց սահմանված կարգի հետեւանքն է, որ այնպիսի մարդը վերջը մեծ նեղութիւնների մէջ պէտքէ ընկնի, երբ որ մի անառակ մարդ իւր պատանեկութեան ոյժը անխնայ կերպով վատնել է, իւր հասակն առած օրերը տկարութիւնից պէտքէ գառնանան, երբ որ ոյժ ու իշխանութիւն բանեցնել սիրող, կռւի, կամ չարութեան պատճառի ետեւից ման եկող մարդը արդէն բաւական երկար ժամանակ իւր մօտիկ մարդիկներին վիրաւորել, ցաւացրել է, վերջը վերջը բոլոր նորա դրացիներն զղուելով, իւրեանց մէջից գուրս են ձգում: Երբ որ մի չար լե-

զու տեսակ տեսակ զրագարսութիւններ յարմարեցնումէ ուրիշների վերայ ու նոցա այրումէ, գալիս է նոյնպէս ժամանակը, որ նոյն բանն իւր գլխին է եւս գալիս, եւ այն ժամանակն է հասկրամատմ նու թէ չարութիւններ անելը, ուրիշներին այրելը ինչպէս բան է: Խնչ չափով որ մենք չափումենք, նոյն չափան եւս մեզ են չափում: Եւ ինչ որ կցանէ: մարդս, այն կհնձէ:— Այս ասածներս միայն այս, այն մարդի վերայ չէ, այլ ամբողջ գերգասաւանների ու ամբողջ աղգերի վերայ եւս: Երբ որ մի հասարակութեան, մի ժողովրդի մէջ մի սխալանք է պատահում: կամ մի յանցանք մի պակասութիւն են անում, պատիժն ամենքն են քաշում: Առաքինութիւնից օտարացած ու մոլութեան ինքն իւրեան տուած մի ընտանիք Աստուծուարդութեան անփոփոխ օրէնքով կոտրած անունով է փչանում, եւ մի աղգոր մեղքերի մէջ է գլորված ու թաղված, բնական օրէնքի երրէք չժուլացող զօրութեամբ պէտքէ աշխարհիս երեսում ջրմայ: Այսպիսի զգուշացնող օրինակներով իի է պատմութիւննեայց հեռու լինի մեզանից, որ մենք սարսափելով մի այսպիսի, չառ անգամ զարհուրելի ու արիւնահեղ Աստուծու դատաստանից, մեր բանական առողջ միոքը խառնվելով, աղգերի վիճակը անօրինողին իրեւ բարկացող ճանաչենք, թող թէ մեզագրենք: Նա իւրատումէ սիրելուն համար եւ ճանապարհից գուրսեկածներին ու մոլորվածներին ուղիղ ճանապարհը բերելու համար, մոլորութիւնների մէջ կեզառուլածներին նեղութիւնների կրակով գարձեալ մաքրելու համար: Այստեղ եւս պատմութիւնը բաւական օրինակներ է մեր առաջին գնում թէ ինչպէս շատ մեծ նեղութիւն եւ սաստիկ խայտառակող թշուառութիւն աւելի փրկարար ներգործութիւն են ունեցել, քան թէ բաղդաւորութեան ամենալաւ օրերն մեզ ցոյց է տալիս թէ ինչպէս այն թագաւորութիւններն, որոնց մէջ ամենայն բարձր ու աղնի մատածմանք եւ ամենայն միաբանութիւն, սէր, համաձայնութիւն կորել, վերացել էր, իւրեանց գլխին եկած գառն պատահմունքի հարուածներով գարձեալ գործ կատարելու, բան առաջացնելու առաջվան ոյժն սէրն իւրեանց մէջ զարթել է: Նատ ու շատ անգամ այսպիսի յեղափոխութիւնը, այսպէս ամենայն բան գէպ ի լաւն փոխվելը մէկ անգամից չէ լինում յանկարծ: Քիչ է պատահում, որ մի քանի տասն տարիներ են վերան անց կենում ուր մարդիկ իւրեանց անբաղդ դրութեան մէջ մնումեն, մինչեւ որ աչքերը բացվումեն, տեսնումեն ու հասկանում իւրեանց ողորմելի գառն վիճակն եւ բարին մտածում: Այսպիսի լաւ ու մեծ փոփոխութիւնը մարդիս սրտի խորքում պէտքէ կերպաւորվի ցաւեր քաշելով պէտքէ ծնվի. պատահումէ որ թոռներն են վայելում իւրեանց մեծ հայրերի գառն փորձառութիւններով յառաջացրած բարիքի քաղցր պառվներն: Բոլոր մարդիս կեանքում աշխարհիս ուժից շատ ու շատ բարձր էութեան զօրութիւնը կզգանք, որ կայ. նորա անունը

ուր է: Այս զօրութեան ընդգետմ ոչ ոք մի բան անել չէ կարող, թէ ով լինի լինի. թագաւորական գահի վերայնուած լինի, կամ աշխարհիս մէջ ամենիդ խելօքը լինի: Կոյնապէս եւս ազգերը, որ շափ եւս մեծ, որչափ եւս զօրաւոր լինին, այս գերագոյն զօրութեան որած որոշման բնթաղըն ու նապատակը իւրեանք կարգի դնել չեն կարող ոչ մի ժամանակ: Ժամանակների անիւը պտոյտ տուռզը ուրիշ ձեռն է, այս այն ձեռն է, որ երկինքն ու երկիրս է ստեղծել, եւ որ քամիներին ու ծովի հոսանքներին իւրեանց գնայու ճանապարհներն է ցոյց տալիս: Այս գերագոյն զօրութեան անունը սէր է:

Մենք կարձատես մահկանացուներս չենք կարողանում Աստուծու կառավարութեան ու կարգադրութեանը բավկա կարգանքում մուտք, անց կացող արած ազգեցութեանն նայելով, կշռել, հասկանալ, այն շուտ անցնող բոպէների ազգեցութեամբ, որ մեզ, ցաւ կամ ուրախութիւն են բերում: Ամենայն բան սերտ կերպով կապտած է աշխարհիս կարգի հետ: Այս բոպէիս մէջ պատահած բանը նախընթաց գարերի պատուզն է, եւ դորա հետեւանքն ասլագայ: Հաշուի տակ յրերելու շատ հետու ժամանակներիցն եւս այն կողմն է անցկենում, ինչպէս որ ծովի մէջ ձըգած մի բարը ջրերը շարժ է տալիս ու այդ շարժումն մինչեւ միւս կողմի տին է գնում, համնում: Այս պատճառով Աստուծու այս այն գործը երկար ժամանակ մեզ համար անհասկանալի է մնում, շատ անգամ մենք չենք հասկանում, թէ ինչի համար մենք, կամ ուրիշներն այսպէս շատ բան պէտք է քաշենք: Տարիներ անցնելուց յետոյ, երբ որ մեր գլխին բոլոր եկած բաների մեմեանց հետ կապ ունեցած պատահմունքից բաւական բանի խելք ենք կարողանում թէ այս, այն մեզ պատահած մենք ինչ նշանակութիւն ուներ բոլոր մեր գլխին եկածների համար, եւ այս ժամանակ շնորհակայ ենք լինում այն բանի համար, որի վերայ գանգատ է ինք անում առաջ: Այսպէս այս ու այն բանը, որ մի ժամանակ քաշեցինք, մեզ պատահած անբաղդութիւն համարելով, այժմ երեւումէ, որ բազգաւորութիւն էր: Այս ու այն բանը, որով յաղթիւթեան ուկիզըն էր: Յաւը, քաշելիքը կրթվելու եւ բան սովորելու միջոցներից ամենասուրբն է մեր երկնաւոր Հօր ձեռին եւ մենք այն ժամանակ ենք ճշմարտապէս հասկանում, երբ որ խմանանանումենք մեր լաւ խելք հասցնելով թէ Աստուծած սիրողների համար յար բան չկայ, ամեն պատահածը բարի է:

Աստուծած սէր է: Նա մեզ ուղարկեց Յիսուս Քրիստոսին, որ առ լոյսը մեր կեանքի մութին անապատների մէջն ծագի, ո՞վ է, որ նորանից աւելի չարչարանք ու դաւեր է քաշել բոլորովին արդար տեղը: բայց նա իւր խաչն անգամ Դողգութայի սարն տարաւ, ուր որ իւր արիւնը պէտքէ թափիւր: եւ այս չարչարանքը բոլոր մարդկային աղգի համար օրհնութիւն ու Աստուծու

բարիք բերեց: Ընդդէմկանգնեց արդեօք իւր համար եղած տրոնօքնութեան արտնջումէր արգեօք այն վճռի համար: որով իւր մարմինն չարչարանքի պիտի մատնվէր: Այս նորա աղօթքը լին էր կատարեալ հաւատում: ոչ մէ ինչպէս ես եմ կամենում, ոչ չայր: ասումէր նա: այլ ինչպէս Քո կամք է: Աւ ինչի համար էր այսպէս հնագանդ մինչիւ իւր մաշն: Արսվանեալ իւր ոչ մի ուրիշ մահկանացու մարդի այնպէս կատարեալ կերպով հասկանալ տուած չէր իմիրաւաս, նա միանգամ աշքը ձգելով ապագայ ժամանակին, իմացել էր: որ իւր ցաւն ու չարչարանքը բոլոր մարդկացին աղգի փրկութեան, աղատութեան գրաւականը պիտի լինի: որսվանեալ նա գիտէր: որ Առաստած ուր է:

Մարդկային աղգին կատարելու թիւն քարոզովի ու կատարելութեան մեծ ու միակ Տիպորի աշակերտը ճանաչելով ինձ: Աս եւս ցանկանումեմ այս համոզմանս մէջ հաստատ մնալ մինչիւ իմ մահս: Այս համազումիցու ամենիւն յետ չեմ կենոյ: Այժէ որ իմ վիճակս ու հանգամանքներս աւելի վատանան եւս եթէ որ տյն բեռն, որ երինաւոր Հայրս վերաս բարձումէ, աւելի եւս ծանրանայ ինձ համար: Եթէ որ մի օր սիրոս այնչափ կատրիչը ու այնքան թուրանայի, որ Աստուծու նախախնամութեան ընդդէմ տրանջէի, նորա ճանապարհներին խելքս չհանիերուն համար: այն ժամանակ Դու ազատիր ինձ յուսահատութիւնից ով սուրբ խօսք թէ Աստուած ուր է: Այս մեծ խօսքը Աստուծու ամեն գործերի գաղանիքի բանալին ինի ինձ համար: իմ ուխտագնացութեանս ամեն ճանապարհների վերաս սիրոս հովայնով ջուրը ինի, որ ոյժս վերաս գոյ ու նորոգվիմ: ուրախ ուրախ յառաջ տանեմ ճանապարհս ու տեղս հանիմ: Աւ եթէ կան բաներ, որ ինձ մութ են մնում, խելքս չհանիլով, ու զար տեղն եմ հարցնում թէ չ'նչի համար, յոյս ունիմ որ այս բոլոր հանելուկները կլուծվէին կպարզվէին այնտեղ, ուր որ իմ հաւատս ու հաւատալս երանելի գէմ յանդիման տեսնելու կրփոխի: Իմ երկրաւոր կեանքիս գործերը կատարելուց վերջացնելուց յետոյ այստեղ վերջին հառաջս չնորհակալութեան հառաջ լինի: իսկ այնտեղ, յաւիտեական կեանքում Աստուծուս աթոռի մօտն, առաջին ալէլուեաս Առաստած ուր է խօսքը լինի: (Խառնէ:)

Գր. Եղ. Աղ.

ՄԱՆԿԱԾԱՐԺՈՒԱՆ ԱՃԽԱԲՀԵՅ ՔԱՂՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ.

Ե.

Ո----շն յորութեան դէղի նոր աշխերանեւ:

Կան ու սուցիչներ, որոնք դպրոց մոած միջոցին կարծումն թէ դտնվումն գեղեցիկ ծառերով ու ծաղկներով ին մի այդու մէջ, որ լնծայումէ իւրեան զուարճալի տեսարաններ: Կան եւ անպիսիները, որոնք մտնելով դպրոցը կոր-